



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

<<13>> սեպտեմբերի 2014թ.

N 175/Մ

ք.Ստեփանակերտ

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ  
ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով՝ հանրապետության շրջաններում ապրող լսողության խանգարումներով երեխաների հետ ինտերակտիվ ուսուցում կազմակերպելու նպատակով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. <<Գնահատման և թեստավորման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական կարիքների գնահատման բաժնի միջոցով կազմակերպել լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ ինտերակտիվ ուսուցում.
2. Հաստատել ինտերակտիվ ուսուցման կազմակերպման պայմանագրի տիպային ձևը՝ համաձայն հավելվածի.
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել <<Գնահատման և թեստավորման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:



**Ս.ԱՍՐՅԱՆ**